Դուք օգտվում եք ինտերնետից ժամանակ առ ժամանա՞կ: Ուրեմն Ucom-ի Ինտերնետ Մեկից Մեկ կանխավճարային սակագնային պլանը հենց Ձեզ համար է: Օգտվեք ինտերնետից երբ ցանկանաք, որքան ցանկանաք մինչև 512 Կբ/վ արագությամբ՝ վճարելով միայն օգտագործած ժամանակի համար:
Յուրաքանչյուր օր առաջին անգամ ինտերնետ մուտք գործելու պահին Ձեր հաշվից կգանձվի 100 դրամ տվյալ օրվա համար, որի դիմաց կստանաք 100 բոպե ինտերնետից օգտվելու համար: Այնուհետև մինչև տվյալ օրվա ավարտը (մինչև 23:59:59) կշարունակեք օգտվել ինտերնետից 1 դրամ/բոպե սակագնով: Միացման վճարը գանձվում է միայն այն օրերի համար, որոնց ընթացքում Դուք կմիանաք ինտերնետին:
Խնդրում ենք հաշվի առնել, որ օրվա ավարտին Ձեր կապը կընդհատվի և անհրաժեշտ կլինի կրկին մուտք գործել ինտերնետ: Նախքան Ձեր մոդեմը USB բնիկից հանելը համոզվեք, որ անջատել եք այն, այլապես Դուք կհամարվեք ինտերնետին միացած և դրա համար գանձում կկատարվի ևս 5 բոպե:
Ինտերնետ Մեկից Մեկ SIM քարտով Դուք կարող եք նաև կարճ հաղորդագրություններ ուղարկել անմիջապես Ձեր համակարգչից տեղական բոլոր համարներին՝ 15 դրամ/SMS, իսկ միջազգային համարներին՝ 20 դրամ/SMS սակագնով:
Ինտերնետ Մեկից Մեկ առաջարկի բաժանորդները չեն կարող օգտվել Եվս Մեկ Անգամ, Արագ Բեռնում, Գիշերային Ինտերնետ, Ինտերնետ Միասին և Kaspersky ծառայություններից:
Ինտերնետ Մեկից Մեկ առաջարկից օգտվելու համար պարզապես գնեք Ինտերնետ Մեկից Մեկ SIM քարտ և մոդեմ ՀՀ մարզերում գտնվող Ucom-ի խանութներից: Քարտը ձեռք բերելու համար անհրաժեշտ է վճարել 1000 դրամ, որն ամբողջությամբ կփոխանցվի Ձեր հաշվեկշռին և Դուք կօգտագործեք այն ինտերնետից օգտվելու համար: Եթե չունեք մոդեմ, ապա Ucom-ի ցանկացած խանութից կարող եք գնել Ինտերնետ Հիմա 7.2 Մբ/վ մոդեմ՝ վճարելով ընդամենը 5000 դրամ:
Ինտերնետին միանալու համար տեղադրեք Ինտերնետ Մեկից Մեկից SIM քարտը մոդեմի մեջ* և այն միացրեք համակարգչին: Տեղադրման գործընթացը կսկսվի ավտոմատ կերպով:
Տեղադրման գործընթացն ավարտվելուց հետո սեղմեք Միանալ կոճակը և սկսեք օգտվել Ինտերնետից:
Ինտերնետ Մեկից Մեկը նաև շատ հարմար առաջարկ է զբոսաշրջիկների համար, որոնք կարող են օգտագործել ինտերնետ այնքան, որքան կցանկանան:
* Նոթբուք, պլանշետ կամ այլ սարքավորում օգտագործելու դեպքում խնդրում ենք տեղադրել SIM քարտը համապատասխան բնիկի մեջ:
Մարտի 11-ից շարժական ինտերնետի համարից դեպի արտերկիր SMS ուղարկելու հնարավորությունը կարգելափակվի: Շարունակեք ուղարկել SMS դեպի տեղական ցանցեր: